

Թորոս կաթողիկոսի կեանքը կարճատև կ'ըլլայ Կ. Պոլսոյ մէջ: Երեմիա կը գրէ իր Օրագրութեան մէջ (22 Ապրիլ 1657). «Օրս հոգեւորաէրն ի Սուրբ Նիկողոս եկն նաւով ի Պալատէ եւ հիւանդ էր»: Եօթն օր ետք (29 Ապրիլ) կը վախճանի ու մարմինը կը փոխադրեն Ս. Նիկողայոսի եկեղեցին ու հետեւեալ օրը օծումը և յուղարկուորութիւնը մեծ շուքով կը կատարեն ու կը տանին Պալլըքլըյի գերեզմանատունը ու կը թաղեն Ամդեցի Երեմիա «մեծ իշխանի» ու Եգեսացի Ոհան վարդապետի դամբարաններուն մէջտեղ: Գե-

վաւերագրերը ցոյց կու տան թէ Երուսաղէմ եղած է միշտ ենթակայ Ամենայն Հայոց կաթողիկոսութեան, անկէ առած է սուրբ միւսնը ու հոն զրկած է իր միաբանները եպիսկոպոսական ձեռնադրութիւն ընդունելու: Եթէ Սիսի աթոռակալները եղած ըլլային միեւնոյն ժամանակ աթոռակալներ Երուսաղէմի՝ այդ պարագային ո՞ւր կը մնային Երուսաղէմի պատրիարքներու իշխանութիւնն ու իրաւական դիրքը: Կիլիկիոյ կաթողիկոսներէն ոմանք, զոր օր. Ազարիա ջուղայեցի, Յովհաննէս Այնթապցի, Պետրոս Կարկառեցի (հակաթոռ), օտանդակած ու քաջալերած են Երուսաղէմի պարտքերը վճարելու համար տեղի ունեցած համազգային հանգանակութեան, ու ատկէ թերևս կարծած են իրաւունք ունենալ իրենք զիրենք յորջորջել նաև Պատրիարք Երուսաղէմի. յորջորջում՝ զոր լոկ իբրև շուք կամ պերճանք կցած են իրենց անունին, առանց երբեք ու է իրաւական հանգամանք կամ իշխանութիւն ունենալու Երուսաղէմի Աթոռին վրայ: Մեր այս ըսածը կը հաստատուի հետեւեալ պատմական իրողութեամբ:

Կիլիկիոյ Յովհաննէս Այնթապցի կաթողիկոսի (1602-1622) օրով ազգովին արժան կը համարեն Գրիգոր Պարոնտէրը, որ երկու տարիէ ի վեր կը վարէր Երուսաղէմի Աթոռը, եպիսկոպոսութեան աստիճանին բարձրացնել: Կը գրէ Պարոնտէրի ժամանակակից ու ականատես կենսագիրը (մեր Ձեռ. թիւ 322, թղ. 36ա-36բ). «Եւ յորժամ տեսին ազգս հայոց զհաւատարիմ ծառայութիւն սորա որ վասն Ս. Երուսաղեմայ, ապա ի Ռիթ (= 1613) թվին հարկ ի վերայ եգին և կոչեցին զառաքինի Աւետիս կաթողիկոսն Ս. Էջմիածնայ, և բազում վար-